ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

130
(2796)

16 սեպտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

100 դրամ

Քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲՆԱԿԱՐԱՆ Է ԳՆԵԼ, ԲԱՅՑ ԱԺ-ԻՑ ՏԱՆ ՎԱՐՁ Է ՍՏԱՆՈՒՄ

ԱԺ պատգամավոր, Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի փախնախագահ Թագուհի Ղազարյանը 2022 թվականին մայրաքաղաք Երեւանում բնակարան է գնել հիփոթեքով այնպես, ինչպես իշխանական խմբակցության պատգամավորների 99 տոկոսը: Չնայած դրան՝ Թագուհի Ղազարյանը շարունակում է Ազգային ժողովի բյուջեից ստանալ տան վարձավճարի փոխհատուցում: ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյանը, որ 2019 թվականին պատգամավոր դարձավ «Իմ քայլը» դաշինքի համամասնական ընտրացուցակով, հանրությանը առավել հայտնի էր նախ իր մազերի կապույտ գույնով, ապա նաեւ իր ծննդավայրով. Թագուհի Ղազարյանը Արմավիրի մարզի Արշալույս համայնքից է: Նա, լինելով սոցիալապես անապահով ընտանիքի ներկայացուցիչ, Արցախի հերոս գեներալ Մանվել Գրիգորյանի հովանավորությունն է վայելել, համայնքի ղեկավար Ջարգանդ Գրիգորյանը նրա ուսման վարձավճարն է փոխհատուցել թերեւս համայնքապետարանի կամ այլ միջոցներից: Երբ Թագուհի Ղազարյանը դարձավ ԱԺ պատգամավոր, առաջին բողոքի ակցիան իրականացրեց հենց Ջարգանդ Գրիգորյանի դեմ, բայց դա էական չէ: Կոռուպցիան, հովանավորչությունը, պետության միջոցների վատնումը մերժող հայտարարություններով եւ արժեքների քարոզով իշխանության եկած Թագուհի Ղազարյանը 2019 թվականից ԱԺ ֆոնդից տան վարձավճարի փոխհատուցում է ստանում, այսինքն՝ նրա Երեւանի տան վարձը վճարում են ՀՀ քաղաքացիները իրենց հարկերից: Ու սա՝ այն դեպքում, երբ նա 2022 թվականին տուն է գնել: Եւ տան վարձավճարի, եւ բնակարան գնելու մասին տեղեկությունները «Ժողովուրդ» օրաթերթը ստացել է պաշտոնական աղբյուրներից: Նկատենք, որ Թագուհի Ղազարյանն այժմ նաեւ հեռուստահաղորդավար է Բուն TV-ում:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ արդարադատության նախկին նախարար Արփինե Հովհաննիսյանը, որը հանդիսանում է նաեւ «Իրավական կրթություն եւ վերահսկողություն» ՀԿ նախագահ, Davit & Partners իրավաբանական ընկերության համահիմնադիրը, նոր աշխատանք ունի: Մեր տեղեկությունների համաձայն՝նա ստանձնել է «Աստղիկ» բժշկական կենտրոնի իրավաբանական հարցերով պատասխանատուի պարտականությունները, որտեղ նրա ամուսինը՝ Արշակ Մնացականյանը եւս աշխատում է: Նա «Աստղիկ» բժշկական կենտրոնի փոխտնօրենն է եւ պլաստիկ վիրաբուժության բաժանմունքի ղեկավարը: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց նախկին ՀՀԿ-ական Արփինե Հովհաննիսյանից ճշտել, թե ճիշտ է արդյոք, որ նա հանդիսանում է «Աստղիկ» ԲԿ-ի իրավաբանական բաժնի պատասխանատու, եւ արդյոք այլ բժշկական կենտրոնների հետ համագործակցում է, թե ոչ: Նա պատասխանեց. «Ոչ, ես իմ մասնագիտական գործունեության տիրույթում իրավաբանների թիմի հետ իրավաբանական ծառայություններ եմ մատուցում տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, որոնց թվում կան նաեւ մի շարք բժշկական հաստատություններ»: Այլ դետալներ տիկին Հովհաննիսյանը չմանրամասնեց:

Խնամի-ծանոթ-բարեկամի միջոցով աշխատանքի տեղավորվելը մշտապես մերժող ու թափանցիկության մասին աղաղակող Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք ԽԾԲ-ն նոր ծաղկունք է ապրում: Պարզվում է, որ թավշյա հեղափոխականների օրոք այս արատավոր երեւույթն այնքան է աճել ու մասսայական բնույթ ստացել, որ մտել է ոչ միայն պետական կառույցներ, դպրոցներ կամ մանկապարտեզներ, այլ նաեւ մշակութային կենտրոններ: Երեկ հայտնի դարձավ, որ Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը նոր տնօրեն ունի. այդ պաշտոնում նշանակվել է Արմենուհի Ավետիսյանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վերջինս Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության եւ բարեկարգման վարչության պետ Խորեն Գրիգորյանի կինն է: Քաղաքապետարանի պաշտոնյան իր կնոջը բարձր պաշտոնի է նշանակել տվել՝ Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի բարձր հովանու ներքո:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱՀ պաշտպանական բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի գործով նախաքննական մարմնի կողմից նշանակված հանձնաժողովային ռազմագիտական փորձաքննությունը մոտեցել է ավարտին, եւ առաջիկայում հանձնաժողովի եզրակացությունը կտրվի նախաքննական մարմնին: Ասել է թե՝ գնդակը իրավապահների դաշտում է՝ Ջալալ Հարությունյանի գործը կուղարկվի դատարան, թե կկարճվի: Հիշեցնենք, որ Արցախի Հանրապետության պաշտպանական բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի վերաբերյալ քրեական գործը կասեցվել էր: ՔԿ մամուլի քարտուղար Գոռ Աբրահամյանը լրատվամիջոցներին հայտնել էր, որ քրեական վարույթի նախաքննության օբյեկտիվությունն ապահովելու նպատակով նշանակվել է հանձնաժողովային ռազմագիտական փորձաքննություն, ուստի կայացվել է քրեական հետապնդումը կասեցնելու որոշում: Ջալալ Հարությունյանը մեղադրվում է երկու դրվագով, երկուսն էլ 44-օրյա պատերազմին են առնչվում:

ՊԱՀԱՆՋ

ՍԴ-Ն ՏԱՐՕՐԻՆԱԿ ՈՐՈՇՈՒՄ Է ՀՐԱՊԱՐԱԿԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մարտի 21-ին խորհրդարանի ընդդիմությունը դատգամավորների 1/5-ով դիմել էր Սահմանադրական դատարան:

Տեղեկացանք, որ Սահմանադրական դատարանը մի խայտառակ որոշում է հրապարակել, որի շուրջ ArmLur.am-ը զրուցել է ԱԺ «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանի հետ:

-ԱԺ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդով դիմում ենք ներկայացրել Սահմանադրական դատարան, որով պահանջել էինք, որ կանոնակարգի այն նորմերը, որոնք որ հանձնաժողովի նախագահների եւ տեղակալների հարցերը վերապահում են մեծամասնության քվեարկությանը, այսինքն՝ մեծամասնության որոշմամբ պետք է նշանակվի եւ ընտրվի, այս կարգավորումը ճանաչել օրենսդրությանը հակասող եւ անվավեր, քանի որ, Սահմանադրության պահանջի համաձայն, պաշտոնները բաշխվում են խմբակցությունների միջեւ՝ իրենց ներկայացրած թիմին համապատասխան: Եթե խմբակցությունը ստանում է որեւէ հանձնաժողովի նախագահի պաշտոնում նշանակման իրավունք, անկախ քաղաքական մեծամասնության ցանկությունից, այդ որոշման իրավունքի տերը խմբակցությունն է: «ԱԺ կանոնակարգ» օրենքը նախատեսում է, որ խմբակցությունը ընդամենը թեկնածու է առաջադրում: Մենք համարում ենք, որ այս նորմը հակասում է Սահմանադրությանը, եւ խմբակցությունը, որին վերապահված է այդ տեղը, ինքն իր որոշմամբ նշանակվում է, եւ մեծամասնությունը պետք է հաշվի նստի այս որոշման հետ: Մարտի 28-ին Սահմանադրական դատարանը իր աշխատակարգային որոշմամբ ընդունել է վարույթ, նշանակել է գործի քննության ժամկետ. 2023 սեպտեմբերի 12 նշանակել է զեկուցող դատավոր Վաղարշյանը, որը ՍԴ-ի դատավոր է: Գալիս է սեպտեմբերի 12-ը, եւ, փոխարեն նիստը սկսելու, գործի քննության անցնելու, նիստը չի կայանում ՍԴ-ում, եւ նույն օրը ես՝ որպես պատգամավորների լիազոր ներկայացուցիչ, ստանում եմ գրություն դատավոր Վաղարշյանից այն մասին, որ ՍԴ-ն իր աշխատակարգային նիստին քննարկել է այս հարցը եւ եզրակացրել, որ վստահ չեն, որ արդյոք պատգամավորների մեկ հինգերորդը ստորագրել են հենց այս դիմումը, եւ 2-րդ՝ որ իրենց ներկայացուցիչը ես եմ: Սա մի շարք օրենքների խախտում է, եւ սա չի համապատասխանում ՍԴ մասին օրենքին, սա հակասում է էթիկական նորմերին:

-Այսինքն՝ Դուք պատշաճ չեք ներկայացրել փաստաթուղթ:

-Եթե անգամ պատշաճ չլիներ, թեկուզ ձեւական առումով ինչ-որ փաստաթղթեր պակասեր, ապա, նշածս կարգավորումների համաձայն, պարտավոր էին իրենց աշխատակազմը դիմումը մուտքագրելու պահից տեղեկացներ այդ մասին: Եթե անգամ հնարավոր էր տեղում շտկել, կշտկեին, բայց, ոչ 175 օր անց, երբ հանրությունը եւ մենք սպասում էինք գործի քննությանը, ստանում ենք նման պատասխան, որը վեր է սահմանադրական վարչարարության բոլոր կանոններից, որն, ըստ էության, վիրավորանք է իր մեջ պարունակում

-Պարոն Մինասյան, սա ի՞նչ է ենթադրում, ինչո՞ւ են նման որոշում կայացրել:

-Այն մասով, թե պատգամավորները իմացել են՝ ինչ դիմում են ստորագրել: Ըստ էության, Սահմանադրական դատարանը կասկածում է պաշտոնական փաստաթուղթ կեղծելու մեջ, ապա դրա համար գոյություն ունի այլ քրեական վարույթ: Բայց ակնհայտ է, որ նպատակը ՍԴ-ի եւ այն դատավորների, որոնք որ հակված չեն ըստ էության քննելու անվիճարկելի մեր պահանջը բավարարելու հարցով, փորձ են անում արհեստական ձգձգել այս հարցը: Մեր պահանջը հիմնված է միայն Հայաստանի Սահմանադրության եւ սահմանադրական կարգավորում ենթադրող կանոնակարգ օրենքի տրամաբանական վերլուծության վրա, այն հիմնված է նաեւ միջազգային չափորոշիչների վրա: Ակնհայտ է դառնում այն, որ քաղաքական մեծամասնությունը հանձնաժողովի նախագահների պաշտոնանկ էր անում կամ ստեղծում էր այնպիսի պայմաններ, որ իրենց ոչ ցանկալի անձն է հանձնաժողովի նախագահ, եւ նրանք փորձում են ամեն գնով նրանից ազատվել: Հիմա Սահմանադրական դատարանը անուղղակի, այս պահին առերեւույթ նման վարքագիծ է դրսեւորում՝ աջակցել քաղաքական մեծամասնության այս ապօրինի վարքագծին:

-Ձեր անելիքը ո՞րն է, կա՞մ մի բան, որ պետք է անեք առաջիկայում:

-Չեմ կարող բնութագրել՝ սա ինչ որոշում է: Քաղաքական տեսակետից սա աբսուրդ է: Երկրորդ դիմում ենք ներկայացրել օգոստոսի 9-ին եւ, փոխարենը սահմանված ժամկետում ընդունելու, վարույթ ներկայացնելու, ստանում ենք նմանատիպ պատասխան: Սա պատասխանատվությունից խուսափելու փորձ է:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԻՄՆ ՄԵՐԺԵԼ ԵՆ

Ինչպես հայտնի է, ԱԺ նախորդ խորհրդի նիստում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մրցութային խորհրդի անդամ ընտրվել է ԱԺ ՔՊ խմբակցության դատգամավոր Արուսյակ Զուլիակյանը, եւ անհիմն մերժվել է «Հայաստան» խմբակցության դատգամավոր Թադեւոս Ավետիսյանի թեկնածությունը:

Նշենք, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստեղծվող Մրցութային խորհուրդը ձեւավորվում է Ազգային Ժողովի նախագահի կողմից հետեւյալ կարգի համաձայն. մեկ հոգի ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, մեկ հոգի՝ կառավարությունը, մեկ հոգի՝ Փաստաբանների պալատը, մեկ հոգի՝ Մարդու իրավունքների պաշպանի գրասենյակը, եւ մեկ հոգի՝ Ազգային ժողովի խմբակցությունների ներկայացուցիչներից: Խմբակցությունների համար նախատեսված տեղի համար, եթե կոնսենսուս են ունենում իրար մեջ, միանգամից թեկնածուն նշանակվում է, եթե կոնսենսուս չունեն, ապա ներկայացնում են ԱԺ խորհրդին, եւ խորհուրդը ընտրում է այդ թեկնածուներից մեկին եւ հաստատում է որպես մրցութային խորհրդի անդամ:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, նախորդ բոլոր դեպքերում, կասկած ունենալով, որ քաղաքական մեծամասնությունը չի գնալու ընդդիմության առաջարկները թեկուզ մասնակիորեն ընդունելու տարբերակով, այնուամենայնիվ, «Հայաստան» խմբակցությունը ներկայացրել է իր թեկնածուին:

Թեկնածուն պետք է բավարարի նուն պահանջները, ինչ որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամը:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների՝ԱԺ խորհրդում ՔՊ-ն ներկայացրել է Արուսյակ Զուլիակյանի թեկնածությունը նույնպես, եւ առանց որեւէ քննադատական խոսքի եւ պատճառի մերժում են Թադեւոս Ավետիսյանի թեկնածությունը: Սա եւս մեկ անգամ ցույց է տալիս, որ քաղաքական մեծամասնությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մրցութային խորհրդում ընդդիմության մասնակցությունը չի պատկերացնում:

Սա՝ այն դեպքում, երբ Կառավարության կողմից իշխանության ներկայացուցիչ կա այդ խորհրդում, եւ՛ ԲԴԽ-ի, եւ՛ ՄԻՊ-ի ներկայացուցիչները եւս համարվում են իշխանություն: Իշխանությունը ընդդիմության այդ մեկ տեղը չի կարողանում մարսել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿԿԱՐՃՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն որոշում է կայացրել, եւ առաջիկայում այն կհաստատվի, ու 2008թ. «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանի նկատմամբ հարուցված քրեական գործը կկարճվի: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Գեղամ Պետրոսյանի պաշտպան Վաղարշակ Գեւորգյանը դիմում էր ներկայացրել նախաքննական մարմին, որպեսզի Գեղամ Պետրոսյանի դեմ հարուցված քրեական գործը կարճվի, եւ նա արդարացվի: Ինչպես հայտնի է, 2019 թվականի օգոստոսի 4-ին «Երեւան Կենտրոն» ՔԿՀ-ից կամ բոլորին հայտնի «ԿԳԲ-ի պադվալից» ազատ արձակվեց «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանը: Անցել է շուրջ 3 տարի, սակայն Գեղամ Պետրոսյանի ազատ արձակվելուց հետո որեւէ քննչական գործողություն չի արվել, եւ քրեական գործը մնացել է Հակակոռուպցիոն կոմիտեի դարակներից մեկում: Հիշեցնենք, որ Գեղամ Պետրոսյանը մեղադրվում է 2008 թվականի մարտի 1-ին հրազենի գործադրմամբ Զաքար Հովհաննիսյանին սպանելու համար: Նրան մեղադրանք էր առաջադրվել՝ ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ սպանություն: Վերջինիս նախաքննական մարմինը կալանավորել էր, քանի որ քրեական գործով Գեղամ Պետրոսյանի դեմ ցուցմունք էր տվել ոստիկանության զորքերի ենթասպա Ալեքսանդր Ազարյանը՝ հայտնելով, թե տեսել է՝ինչպես է Գեղամ Պետրոսյանը կրակել Զաքար Հովհաննիսյանի վրա: Ավելի ուշ փորձաքննության արդյունքները ցույց տվեցին, որ իրականում Պետրոսյանի զենքի եւ դիակում եղած պարկուճի տեսակները չեն համընկնում, եւ այդ հիմքով Պետրոսյանն ազատ արձակվեց: Որպես ամփոփում՝ նշենք, որ 2008 թվականի մարտի 1-ին սպանված 10 հոգուց որեւէ մեկի սպանության դեպքը բացահայտված չէ, չգիտենք՝ ով գնդակահարեց Երեւանի կենտրոնում 10 քաղաքացու: Նիկոլ Փաշինյանն իր այդ խոստումը չկատարեց:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

«Ռուսաստանը հետեւողականորեն աշխատելու է Բաքվի եւ Երեւանի հետ. վերջերս ստացվել է մարդասիրական բեռի առաջին խմբաքանակը, որը կազմակերպվել է ռուսական կողմի ջանքերի շնորհիվ, քննարկվում են իրավիճակի կարգավորման տարբեր տարբերակներ»,- հայտարարել է ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովը. փոխանցում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

«Ռուսական կողմը հետեւողականորեն շարունակում է իր աշխատանքը եւ՛ Բաքվի, եւ՛ Երեւանի հետ: Մենք կշարունակենք դա անել: Բոլորովին վերջերս, փաստորեն, ստացվել է մարդասիրական բեռի, մարդասիրական օգնության առաջին խմբաքանակը, որը կազմակերպվել է ռուսական կողմի ջանքերի շնորհիվ: Այժմ տարբեր տարբերակներ քննարկվում են, մշակվում կողմերի հետ. այդ աշխատանքը մենք կշարունակենք»,- ասել է Պեսկովը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԿՆԱՐԿԸ

Ադրբեջանը ակնարկել է Լաչինի միջանցքում ապօրինի անցակետի տեղադրման իրական նպատակների մասին: «Ադրբեջանահայկական սահմանին Լաչինի անցակետի ստեղծումից եւ դրա գործունեությունը սկսելուց հետո աշխատանքներն արագացվել են շուրջ 400 հետախուզվողների ձերբակալման եւ հետաքննության տեղափոխման ուղղությամբ», - լրագրողներին ասել է Ադրբեջանի գլխավոր դատախազ Քեմրան Ալիեւը: Գլխավոր դատախազի խոսքով՝ «Ղարաբաղում ռազմական հանցագործություններ կատարած հայազգի մի քանի անձինք ձերբակալվել են»: «Անցակետի տեղադրումից հետո արագացվել են մոտ 400 հետախուզվողների ձերբակալելու եւ հետաքննությանը փոխանցելու աշխատանքները: Հուսով եմ, որ այս ուղղությամբ ապագայում մենք ավելի դրական արդյունքների կհասնենք»,- ասել է Քեմրան Ալիեւը:

ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանը սեպտեմբերի 15-ին հրավիրել է աշխատանքային խորհրդակցություն:

ԱՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ խորհրդակցության օրակարգում Ադրբեջանի կողմից Արցախի լիակատար շրջափակման հետեւանքով հանրապետությունում ստեղծված իրավիճակն էր եւ դրա հաղթահարման մեխանիզմները: Արծարծվել են նաեւ բնակչության պարենային խնդիրների լուծման, գյուղատնտեսական ապրանքների գնագոյացման, կենսական նշանակության ապրանքների բաշխման հետ կապված եւ այլ հրատապ խնդիրներ: Նախագահ Շահրամանյանը նշել է, որ կառավարությունը պետք է օպերատիվ միջոցներ ձեռնարկի հանրապետությունում առկա պարենային ռեսուրսների կետրոնացման, բնակչությանը կենսական նշանակության ապրանքների տրամադրման գործընթացը կտրոնային համակարգի միջոցով կազմակերպելու ուղղությամբ:

«Մենք պետք է անհապաղ արձագանքենք բնակչության շրջանում առկա դժգոհություններին, օգտագործեք բոլոր անհրաժեշտ միջոցները գյուղատնտեսական ապրանքների գնաճը կանխելու, գները կարգավորելու եւ առկա սուղ միջոցներն արդար բաշխելու համար», - ընդգծել է երկրի ղեկավարը:

Նշենք, որ խորհրդակցության ընթացքում նախագահն անդրադարձել է նաեւ ռուս խաղաղապահների ու Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ Արցախից Հայաստանի Հանրապետություն քաղաքացիական անձանց տեղափոխման խնդիրներին: Սամվել Շահրամանյանը նշել է, որ այդ գործընթացը պետք է իրականացվի խիստ վերահսկողության պայմաններում, թափանցիկ ու գործող կարգերին համաձայն: Այդ համատեքստում երկրի ղեկավարն ընդգծել է տեղերում աշխատանքային խմբեր ստեղծելու անհրաժեշտությունը:

Հավելենք, որ նախագահը խորհրդակցության օրակարգային հարցերի վերաբերյալ կոնկրետ հանձնարարականներ է տվել լիազոր մարմինների ղեկավարներին:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՄ ԿԿԱՆԳՆԻ՞

«30 տարի առաջ գործընկերոջս հետ զեկույց ենք գրել, թե այդ օրերին ինչ էր տեղի ունենում Ղարաբաղում, 30 տարի անց, դժբախտաբար, իրավիճակը Ղարաբաղում չի բարելավվում»,- սեպտեմբերի 15-ին՝ Երեւանում հրավիրված մամուլի ասուլիսին, հայտարարեց Միացյալ Թագավորության լորդերի պալատի անդամ, բարոնուհի Քերոլայն Քոքսը:

«Ինձ միշտ ապշեցնում է այն միաձայնությունը, որով դուք կիսում եք մի ընդհանուր նպատակ, այն է՝ ապրել խաղաղ, արժանապատիվ եւ անվտանգ ձեր իսկ սեփական հողում: Այդ բաղձանքը շարունակում է լցնել իմ սիրտը: Հիշում ենք ղարաբաղյան առաջին պատերազմի սարսափները. ես այնտեղ եմ եղել անձամբ եւ տեսել Ադրբեջանի կողմից ձեր ժողովրդին հասցված հսկայական տառապանքը: Անձամբ եմ ականատես եկել, թե ինչպես է Ադրբեջանի կողմից օրական 400 գրադ արձակվում Ստեփանակերտի վրա, տեսել եմ, թե ինչպես է 500 կգ-անոց ռումբ ընկնում քաղաքացիական տների վրա:

Մեծ ցավով եմ հիշում, երբ արցախցիները օգնություն կանչեցին, աշխարհին կանչեցին. աշխարհը նախընտրեց չլսել: Շատ ազգեր իրենց ականջները փակեցին, այդպիսով էլ ավելի սատարեցին մեղավորներին՝ անպատիժ կերպով շարունակելու իրենց բռնություններն ու սպանությունները», - ասաց բարոնուհին:

Նա հավելեց, որ վշտացած է միջազգային գերտերությունների գործողություններից, որոնք շարունակում են ճնշում գործադրել Հայաստանի վրա՝ ընդունելու Ադրբեջանի ինքնիշխանությունը Արցախի նկատմամբ:

«Արցախի բնիկ, հայ քրիստոնյա բնակչությունը կանգնած է իր պատմական հողում էթնիկ եւ կրոնական զտումների առջեւ: Այս իրավիճակը գնալով սրվում է: Մինչ օրս որեւէ ազգ կամ միջազգային կազմակերպություն չի արձագանքել հայ ժողովրդի աղաղակներին՝ ո՛չ ՄԱԿ-ը, ո՛չ ԵԱՀԿ-ն, ո՛չ ԱՄՆ-ն, ո՛չ ՆԱՏՕ-ն, ոչ ՀԱՊԿ-ը եւ ո՛չ էլ Ռուսաստանը: Ոչ մի ժողովուրդ չի դիմադրել Ստեփանակերտի նկատմամբ Բաքվի տարածքային հավակնություններին:

«Հարց է առաջանում՝ միջազգային հանրությունից ո՞վ դեմ կկանգնի, եթե Բաքուն տարածքային հավակնություններ ունենա Երեւանի, Սեւանի կամ Զանգեզուրի նկատմամբ: Ադրբեջանական քաղաքական ղեկավարությունը չի թաքցրել իր ռազմավարական նպատակը, դա է՝ գրավել ձեր հայրենիքը», - ասաց բարոնուհին:

Նա նշեց, թե Ստեփանակերտի «Լեդի Քոքսի վերականգնողական կենտրոնի» հիմնադիր Վարդան Թադեւոսյանը երկու օր առաջ իրեն ասել է հետեւյալը. «Սննդի պաշարները վերջանում են, մեկ ձվի արժեքը հիմա 800 դրամ է: Հոգնել ենք նման պայմաններում ապրելուց, հոգեկան հիվանդ ենք դարձել, կարծես բանտում լինենք՝ չիմանալով, թե որքան ժամանակ պետք է մնանք այստեղ»:

Բարոնուհին ասուլիսի ընթացքում մեջբերեց Հայաստանում գտնվող արցախցիներից մեկի՝ իրեն փոխանցած խոսքերը. «Ամեն օր տեսնում եմ տատիկիս՝ հացի հերթում կանգնած նկարները. նա ամեն օր հերթից ձեռնունայն է տուն վերադառնում: Եղբայրս ալերգիա ունի, քույրս՝ շաքարային դիաբետ, բայց դեղորայք չեն կարողանում ձեռք բերել: Սիրտս կտոր-կտոր է լինում. միակ բանը, որ ուզում եմ՝ շրջափակումը վերջանա, որ կարողանանք միասին լինել»:

«Առանց հայկական Արցախի Հայաստանի Հանրապետության գոյությունն էլ ավելի կվտանգվի, քան վտանգված է այսօր»,- հայտարարեց Քոքսը:

Նրա խոսքով՝ խաղաղության պայմանագրի եւ առեւտրային համաձայնագրի դիմաց Արցախի ժողովրդից ակնկալվում է, որ հրաժարվեն իրենց ինքնորոշման իրավունքից: Քոքսը վստահ է՝ այդպիսով ավելի քան 120.000 բնիկ հայ կդառնա հակահայկական ավտորիտար պետության քաղաքացի. նրանք ստիպված կլինեն զիջելու իրենց ազատությունն ու սեփական հողի նկատմամբ վերահսկողությունը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԱՐՀԱՆՈ՞ՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին Արցախի տեղեկատվական շտաբից հայտնում են, որ վերջին օրերին ադրբեջանական որոշ լրատվամիջոցներ փորձում են ռուսական խաղաղապահ զորախմբի կողմից մի խումբ քաղաքացիների տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն ներկայացնել որպես զինծառայողների տարհանում:

«Հարկ ենք համարում նշել, որ Արցախի Հանրապետությունում ՀՀ քաղաքացի հանդիսացող զինծառայողներ չկան, որի մասին պաշտոնական Ստեփանակերտն ու Երեւանը հայտարարել են բազմիցս:

Արցախից ռուսական խաղաղապահների կողմից տեղափոխված անձինք հայաստանյան եւ արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ են, ՌԴ քաղաքացիներ ու նրանց ընտանիքների անդամներ, ինչպես նաեւ հանրապետությունում շինարարության, հանքարդյունաբերության ոլորտներում ընդգրկված ՀՀ քաղաքացի հանդիսացող մասնագետներ եւ բանվորներ, որոնք Ադրբեջանի կողմից շրջափակման հետեւանքով կորցրել են աշխատանքն ու չեն կարողացել վերադառնալ մշտական բնակության վայր:

ԿԱՄՈՒՐՋ Է ՓԼՈՒԶՎԵԼ

Ադրբեջանի հյուսիսում գտնվող Խաչմազի շրջանում փլուզվել է Գուդիալչայ գետի կամուրջը: Այս մասին, հղում անելով հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարությանը, հայտնում է Sputnik Ադրբեջանը:

Նշվում է, որ Խաչմազ-Խուդաթ ճանապարհին կամրջի փլուզման հետեւանքով գետն է ընկել մարդատար ավտոմեքենա, տուժել է երեք մարդ: Նրանց տեղափոխել են Խաչմազի կենտրոնական շրջանային հիվանդանոց:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ՝ ՍՊԱՌՆԱԼԻ՞Ք

«Ռուսաստանը ոչ ոքի համար սպառնալիք չի ստեղծում»,- հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը. փոխանցում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

«Մենք ոչ ոքի համար սպառնալիք չենք ստեղծում: Ամենամեծ սպառնալիքը, որ այսօր ստեղծվում է աշխարհում, ստեղծվում է այսօրվա իշխող էլիտաների կողմից, եւ նրանք, ի դեպ, իրենք են խոսում այդ մասին»,- ասել է Պուտինը Սոչիում Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ հանդիպման ժամանակ:

ՄԻԵԴ–Ը ՄԵՐԺԵՑ

Երեւան-Գյումրի ավտոճանապարհին՝ Լանջիկ գյուղի մոտակայքում, օգոստոսի 14-ին ողբերգական ավտովթարի հետեւանքով զոհված արցախցի Հելեն Դադայանի աճյունն Արցախ տեղափոխելու հարցով դիմումը Եվրոպական դատարանը մերժել է: Այս մասին հայտնեց Հելենի մորեղբայրը՝ Մուշեղ Սաֆարյանը:

Հիշեցնենք, որ օգոստոսի 14-ի գիշերը Երեւան-Գյումրի ավտոճանապարհին՝ Լանջիկ գյուղի մոտակայքում, բախվել են «Volkswagen» մակնիշի ուղեւորափոխադրող միկրոավտոբուսը եւ «ZIL» մակնիշի բեռնատարը: Զոհվել է 12 քաղաքացի, այդ թվում՝ միկրոավտոբուսի վարորդը եւ «Համշեն տուրի» զբոսավարը, ծանր վիրավորել են 6-ը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՐԿՈՒ ԱՆՁԻ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ 2023թ. սեպտեմբերի 2-ին՝ ժամը 20:29-ին, ահազանգ է ստացվել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Վարդանանց-Շիրակացի փողոցների խաչմերուկում տարօրինակ ձայներ են լսվում: Նույն օրը՝ ժամը 20:35-ին, ահազանգ է ստացվել նաեւ «Վանաձորի բժշկական կենտրոն»-ից այն մասին, որ հրազենային վնասվածքներով Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցում գտնվող առեւտրի կրպակի հարակից տարածքից իրենց մոտ բուժօգնության են տեղափոխվել Վանաձոր քաղաքի երկու բնակչուհիներ՝ 24 եւ 33 տարեկան:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով /2 դրվագ/ եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին: Նշված անձինք ճանաչվել են տուժող:

Հավելենք, որ կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ժամանակ հայտնաբերվել են «Մակարով» տեսակի ատրճանակի 3 գնդակ եւ 1 պարկուճ, արնանման հետքեր, վերցվել են փորձանմուշներ եւ դեպքի վայրի հարակից հատվածներում գտնվող տեսանկարահանող սարքերի տեսագրությունները, ինչպես նաեւ դեպքի պահին տուժողների հագին գտնվող հագուստները: Քրեական վարույթով էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու ուղղությամբ նշանակվել են փորձաքննություններ:

Նախաքննության ընթացքում իրականացված քննչական եւ վարութային անհետաձգելի գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը, ինչպես նաեւ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, որը հանդիսանում է Վանաձոր քաղաքի 40-ամյա բնակիչ:

Մասնավորապես, քննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ վերջինս, անձնական հարցերի հետ կապված, անբարյացակամ փոխհարաբերությունների մեջ է գտնվել համաքաղաքացու հետ, որի պատճառով որոշել է վրեժխնդիր լինել:

Այդ նպատակով, նախապես գործածելով ոգելից խմիչք, բարեկամի կողմից վարած «Opel Astra 1.6» մակնիշի ավտոմեքենայով 2023թ. սեպտեմբերի 2-ին՝ ժամը 20:20-ի սահմաններում, մոտեցել է Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցում գործող, համաքաղաքացու ընտանիքին պատկանող մթերային խանութին, իր գործողություններով իրական սպառնալիք ստեղծելով տարածքում գտնվող անձանց կյանքի ու առողջության համար, ապօրինի ձեռք բերված եւ իր մոտ պահած ատրճանակից ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ կրակոցներ է արձակել համաքաղաքացու կնոջ եւ եղբոր կնոջ ուղղությամբ:

Նշված անձինք հրազենային վնասվածքներ են ստացել, ինչպես նաեւ վնասվել են խանութի ապակիներն ու ներսի գույքը: Սակայն վրիպելու եւ միայն տուժածների ստորին վերջույթների շրջանում հրազենային գնդակային վիրավորումների ձեւով մարմնական վնասվածքներ պատճառելու, վիրավորում ստացած կանանց՝ խանութում թաքնվելու արդյունքում նա չի կարողացել նախապես պլանավորած հանցագործությունն ավարտին հասցնել, որից հետո դեպքի վայրից դիմել է փախուստի:

Որոշում է կայացվել՝ Վանաձոր քաղաքի 40-ամյա բնակչի եւ վերջինիս բարեկամի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որից հետո՝ 2023 թվականի սեպտեմբերի 15-ին, նշված անձինք ներկայացել են վարույթն իրականացնող մարմին եւ ձերբակալվել:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 40-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով /2 դրվագ/ եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ նրա բարեկամին՝ 46-44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով /2 դրվագ/:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ժորա Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի հունիսի 26-ին՝ իր հորեղբորը՝ Կարեն Մարտիրոսյանին պարեկային ծառայողների կողմից Իջեւանի բաժին տեղափոխելուց հետո, ժամանել է ոստիկանության Իջեւանի բաժին, առանց թույլտվության մուտք է գործել Պարեկային ծառայության Տավուշի մարզի գումարտակի տարածք, պահանջել հանդիպել Կարեն Մարտիրոսյանին, սակայն ստանալով մերժողական պատասխան՝ ցուցաբերել է ոչ պարկեշտ վարքագիծ, դուրս հրավիրվելուց հետո գումարտակի վարչական շենքի հանդիպակաց տարածքում շարունակել է դրսեւորել ոչ պատշաճ վարքագիծ, հնչեցրել հայհոյանքներ:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Գյումրիում ժամը 15:10-ի սահմաններում տղամարդը փորձել է վերջ տալ կյանքին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ տղամարդը ժավել է խմել, որը նկատել են հարազատները ու նրան շտապ տեղափոխել հիվանդանոց:

Վերջինիս կյանքը փրկել են բժիշկները, ու նրա կյանքին վտանգ չի սպառնում: Իսկ ինչն է եղել տղամարդու այս քայլի պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններից պարզվել է, որ տղամարդու նախկին կինը չի ցանկացել միանալ ամուսնու հետ եւ համատեղ ապրել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ ԾԽԱԽՈՏ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ՊԵԿ-ից՝ օրերս բացահայտվել է հերթական խոշոր դեպքը: Մասնավորապես, Մեղրիի մաքսակետ ժամանած բեռնատարի վարորդի խցիկի զննման արդյունքում հայտնաբերվել է 880 տուփ չհայտարարագրած ծխախոտ: Մաքսավորների մոտ կասկածներ են առաջացրել, որ ցեմենտով բարձված բեռնատարում, հնարավոր է, առկա լինի մաքսային հսկողությունից թաքցված մեծ քանակությամբ ծխախոտ: Մանրակրկիտ մաքսային զննում իրականացնելու նպատակով բեռնատարն ուղեկցվել է «Հարավային տերմինալ» ՓԲ ընկերության ժամանակավոր պահպանման պահեստ, որտեղ անցկացված հսկողության արդյունքում ցեմենտի պարկերի արանքում հայտնաբերվել է շուրջ 10.000 տուփ ծխախոտ:

Այսպես, 2023 թվականի հունվարի 1-ից Պետական եկամուտների կոմիտեի Հարավային մաքսատուն-վարչության աշխատակիցների կողմից բացահայտվել է Ագարակ պետական սահմանի անցման կետով մաքսային հսկողությունից թաքցման եւ չհայտարարագրման եղանակով ընդհանուր 47.543 տուփ ծխախոտի ապօրինի տեղափոխման 84 դեպք: Հարուցվել են վարչական վարույթներ՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 313-րդ եւ 316-րդ հոդվածների հատկանիշներով:

Ընդգծենք, որ մաքսավորների ուշադրության ներքո է գտնվում նաեւ կեղծ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ծխախոտների՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման կանխումը, այդ թվում՝ որպես անձնական օգտագործման ապրանք: 2023 թվականի ընթացքում Մեղրիի մաքսակետում հայտնաբերված 3 դեպքով Պետական եկամուտների կոմիտեի կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտե՝ ՀՀ քրեական օրենսգրքի 289-րդ հոդվածի հատկանիշներով քրեական վարույթ նախաձեռնելու հարցը որոշելու նպատակով:

ՊԱՐՔՎԵՑ

ԽԱԲԵԼՈՒ ՀԵՏՔԵՐՈՎ

Իրականացված քննչական ու վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել է, որ անձն իր հանցավոր մտադրությունն իրականացրել է խարդախության երկու սխեմայով:

Մասնավորապես, List.am կայքէջում եւ Facebook.am սոցիալական ցանցում նա տեղադրել է գոյություն չունեցող բնակարանների վարձակալության վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տվյալների պարունակությամբ հայտարարություններ: Դրանց հետքերով նշված բնակարանները վարձակալությամբ ձեռք բերել ցանկացող երկու տարբեր անձանցից, որոնցից մեկը՝ ՀՀ քաղաքացի, մյուսը՝ օտարերկրացի, որպես վարձավճար, 37-ամյա անձը ստացել է առաջինի դեպքում 320 000, երկրորդի դեպքում՝ 100 000 ՀՀ դրամ, հափշտակել նշված գումարները՝ դադարեցներով նրանց հետ հետագա հաղորդակցությունը:

Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ երկու այլ տուժողների պարագայում նա գործադրել է խարդախության մեկ ուրիշ սխեմա:

Մասնավորապես, քննությամբ պարզվել է, որ Էջմիածին քաղաքի նշված բնակիչը օնլայն տաքսի հավելվածի միջոցով միեւնույն օրը պատվիրել է ավտոմեքենաներ: Տաքսու վարորդների հետ ձեռք է բերել պայմանավորվածություն, որ վերջիններս 600 եվրո գումար փոխանցեն իբր Հրազդան քաղաքում բնակվող իր ծանոթին: Վարորդների մոտ վստահություն ձեռք բերելով՝ նրանցից վերցրել է մի դեպքում 13.000, մեկ այլ դեպքում՝ 25 000 ՀՀ դրամ գումար՝ պայմանավորվածությամբ, որ երբ նրանք փոխանցեն նշված 600 եվրո գումարը հասցեատերերին, վերջիններս վարորդին կվերադարձնեն իր կողմից վերցված գումարները: Տեղ հասնելուց հետո պարզվել է, որ Հրազդան քաղաքում նման անձինք գոյություն չունեն, իսկ փոխանցված 600 եվրոն հուշանվեր-թղթադրամներ են:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 37-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ): Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է բացակայելու արգելքը: Նախաքննության ընթացքում 37-ամյա տղամարդն ընդունել է մեղքը, տվել ինքնախոստովանական ցուցմունք:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 14-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆԱԽԿԻՆԻ ԴԱՏԸ՝ ՀԱՋՈՐԴԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի կառույցի ղեկավար Դավիթ Սարգսյանը 2023թ. սեպտեմբերի 7-ին որոշում է կայացրել Դիլիջան քաղաքի Մյասնիկյան 66 հասցեի վարչական շենքի 3-րդ հարկի միջանցքի 14,95քմ մակերեսով տարածքը քաղաքացիների ընդունելության սրահ օգտագործելու նպատակով 3 տարի ժամկետով օգտագործման տրամադրել «Դիլիջանի ՀՀԳ» ՍՊ ընկերությանը՝ տարեկան 74750 (յոթանասունհինգ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ վարձավճարով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել Դավիթ Սարգսյանին՝հարցնելով, թե շահույթ հետապնդող ընկերությանը ինչու է քաղաքի ամենակենտրոնում գտնվող տարածքը վարձակալության ցածր գնով տրվել: Համայնքապետի պատասխանը դեռեւս չի ստացվել: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում սկսվել, ներկայումս Հակակոռուպցիոն դատարանում շարունակվում է Դիլիջան համայնքի նախկին ղեկավար Արմեն Սանթրոսյանի, համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետի, համայնքապետարանի գլխավոր աուդիտորի դատավարությունը: Նրանք մեղադրվում են այն բանի համար, որ հեռավոր 2006 թվականին Դիլիջանի այդ նույն՝ Մյասնիկյան 66 հասցեի վարչական շենքի տարածքները շուկայականից ցածր գնով են վարձակալության հանձնել: Այն, ինչի համար դատում են նախկին համայնքապետին, կարելի՞ է ՔՊ-ական համայնքապետին:

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԸ՝ ԴԻԼԻՋԱՆԻ ՏԵՐ

Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանին հարցում ենք ուղարկել, թե համայնքապետարանն ինչ միջոցներ է ձեռնարկում Դիլիջանում թափառող կովերի, ձիերի, շների դեմ: Նա պատասխանել է. «Համայնքապետարանի կողմից ամենօրյա ռեժիմով կազմակերպվում են վերահսկման եւ կանխարգելման աշխատանքներ՝ հնարավորինս արգելելու կովերի եւ ձիերի մուտքը բանուկ, երթեւեկելի տարածքներ, իսկ թափառող շների համար իրականացվում են ստերջացման աշխատանքներ, որը կրելու է շարունակական բնույթ»: Դիլիջանցիները շատ դժգոհ են քաղաքում, հատկապես՝ Գետափնյա եւ Ջրհոդեր թաղամասերում անտեր, թափառող շների մեծ քանակությունից, բնակիչների վրա դրանց հարձակումներից: Դիլիջանի բնակչուհի Սյուզի Սիմոնյանն ասաց, որ բնակիչները վախենալով են տնից դուրս գալիս, իրենց երեխաներին չեն թողնում՝ դուրս գան, որ շների հարձակմանը չենթարկվեն: Ասյա Ծատուրյանը հայտնեց, որ իր ծոռան վրա 4 անտեր շուն են հարձակվել: Մերի Հովհաննիսյանն ասաց, որ մի քանի օր առաջ քաղաքային այգում շների մի խումբ հարձակվել է իր 75-ամյա հարեւանի վրա, շներից մեկը նրա ոտքը երկու տեղից կծել է, ծեր մարդը հիվանդանցում է, ուր 10 պատվաստում պետք է ստանա: Կատաղած շունն էլ տեր չունի, որպեսզի տուժածը նրանից իմանա, թե շունն իրեն կծելուց հետո սատկել է, թե ոչ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՇՐՋԱՓԱԿՎԱԾ ԱՐՑԱԽՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի Հանրապետության կառավարության հրապարակած տեղեկագրից տեղեկանում է Արցախում տիրող իրավիճակի մասին շրջափակման 278-րդ օրվա դրությամբ:

Արցախի բոլոր բուժհաստատություններում պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով մոտ 1,960 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման հնարավորությունից՝ վերջին 3 օրվա ընթացքում աճելով շուրջ 15 դեպքով:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ մինչ այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել 815 հիվանդ, իսկ ռուս խաղաղապահների ուղեկցությամբ՝ եւս 70-ը, համապատասխան բուժում ստանալու համար: ԿԽՄԿ գործունեության հանդեպ հարուցված ադրբեջանական լրացուցիչ խոչընդոտների պատճառով գրեթե մեկ ամիս շարունակ դադարեցվել էին տեղափոխությունները մայիսին, կրկին կասեցվել հունիսի 15-ին, որից հետո որոշակի ընդհատումներով ու լրացուցիչ խոչընդոտներով շարունակվում են առ այսօր, իսկ ռուս խաղաղապահների կողմից անձանց տեղափոխությունները կասեցվել էին հունիսի 15-ին եւ վերականգնվել միայն օգոստոսի 21-ին, սակայն միայն մեկ ուղղությամբ՝ Արցախից Հայաստան, որն էլ կասեցվել է օգոստոսի 28-ին՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից արցախցի երեք ուսանողների առեւանգումից հետո:

Շրջափակման հետեւանքով իրենց տներ չեն կարողացել վերադառնալ ավելի քան 6,000 անձինք՝ ներառյալ շուրջ 800 երեխա, որոնց մի մասն արդեն վերադարձել է տուն՝ Կարմիր խաչի եւ ՌԴ խաղաղապահների աջակցությամբ:

Ստեփանակերտ-Գորիս մայրուղով (Լաչինի (Քաշաթաղի) միջանցքով) ոչ մի քաղաքացի ազատորեն չի երթեւեկել, եւ մարդկանց երկկողմանի տեղաշարժի դեպքերը նվազել են շուրջ 224 անգամով, եղածն էլ՝ միայն Կարմիր խաչի ու ՌԴ խաղաղապահների աջակցությամբ: (278 օրվա ընթացքում մարդկանց, 681,100 -ի փոխարեն, 3,042 մուտք եւ ելք, ընդ որում՝ վերջին 3 օրում գրանցվել է քաղաքացիների 27 ելքի եւ մուտքի դեպք ԿԽԿ-ի մեքենաներով):

«Արգելափակված ճանապարհով Արցախի քաղաքացիների ոչ մի մեքենա չի անցել, իսկ մեքենաների ընդհանուր շարժը գրեթե 86 անգամ ավելի քիչ է եղել, քան պետք է լիներ առանց շրջափակման (278 օրվա ընթացքում 255,766-ի փոխարեն՝ 2,990 մեքենայի մուտք եւ ելք, այն էլ՝ միայն Կարմիր խաչի եւ ՌԴ խաղաղապահների կողմից): Դա նշանակում է, որ վերջին 3 օրվա ընթացքում արձանագրվել է մեքենաների 6 մուտք եւ ելք՝ ԿԽԿ-ի մեքենաները, ինչպես նաեւ մեկ բեռնատար մեքենա՝ հումանիտար բեռով:

Շուրջ 19 անգամ ավելի քիչ կենսական նշանակության ապրանք է ներկրվել միայն Կարմիր խաչի եւ ռուս խաղաղապահների կողմից, քան իրականում պետք է լիներ առանց շրջափակման (278 օրվա ընթացքում, մոտ 111,200 տոննայի փոխարեն, 5,730 տոննա, որից վերջին 3 օրվա ընթացքում՝ մոտ 15 տոննա հումանիտար բեռ՝ ռուսական Կարմիր խաչի միջոցով):

Շրջափակման ընթացքում Ադրբեջանը հանրագումարային 211 օր շարունակ լրիվությամբ կամ մասնակիորեն ընդհատել է Հայաստանից Արցախ գազամատակարարումը, իսկ էլեկտրամատակարարումը լրիվությամբ խափանված է արդեն 249 օր շարունակ: Դա հանգեցրել է ամենօրյա հովհարային ու լրացուցիչ վթարային անջատումների եւ բազմաթիվ հիմնարկների գործունեության փակման կամ կրճատման»,- ասված է տեղեկագրում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՆ ՏՎԵԼ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի առնվազն 15 խորհրդականներ հրաժարական են տվել՝նախագահի թիմը «երիտասարդացնելու» միտումներից ելնելով:

«Ռիա Նովոստի»-ի տեղեկություններով՝ այս հարցի վերաբերյալ պաշտոնական հայտարարություններ չեն եղել: Սովորաբար խորհրդականներին աշխատանքից ազատելու մասին պահանջվում է նախագահի հատուկ հրամանագիր, սակայն այս անգամ կիրառել են հրաժարականի այլ մեթոդ. խորհրդականների հետ մանրամասն խոսել են «Երիտասարդացում եւ փոփոխություն» ծրագրի մասին: Ըստ թուրքական լրատվամիջոցների՝ հրաժարական տված խորհրդականների մեծ մասը 65 տարեկանից բարձր էին: Նախագահական ընտրություններից հետո Էրդողանը հունիսին հայտարարեց երկրի նոր նախարարների կազմը, որը 90%-ով բաղկացած էր նոր անուններից:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔ

Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ, 86-ամյա բարոնուհի Քերոլայն Քոքսին անհանգստացնում է միջազգային հանրության արձագանքն Արցախում տեղի ունեցողին: Այդ մասին Քոքսը հայտարարել է Երեւանում կայացած մամուլի ասուլիսում: Նրա խոսքով՝ Արցախի բնիկ բնակչությունը կանգնած է էթնիկական եւ կրոնական զտումների վտանգի առաջ, եւ ստեղծված իրավիճակը համարժեք գնահատական չի ստացել միջազգային հանրության կողմից:

Քոքսը ներկայումս բանակցվող խաղաղության պայմանագիրն անվանում է առեւտրային գործարք, քանի որ Արցախի հայերը ստիպված կլինեն հրաժարվել ինքնորոշման իրավունքից: Նա նաեւ հիշեցրել է, որ տասնյակ հայ զինվորականներ եւ քաղաքացիական անձինք դեռ գերության մեջ են Ադրբեջանում:

Բարոնուհին կարծում է, որ խաղաղության պայմանագրի ստորագրումը չի հանգեցնի տարածաշրջանում կայուն խաղաղության: Նա վստահ է, որ դա չի բավարարի Բաքվի հավակնությունները: Նրա կարծիքով՝առանց հայկական Արցախի, Հայաստանի գոյությունն էլ ավելի մեծ վտանգի տակ կլինի: Ստեղծված իրավիճակում Քոքսը մատնանշեց նաեւ միջազգային հանրության կողմից Հայաստանին հասցեական աջակցության բացակայությունը: Տեղ եւ Կոռնիձոր համայնքներ կատարած իր այցի վերաբերյալ բարոնուհին ընդգծեց, որ անձամբ է ծանոթացել տեղում տիրող իրավիճակին: Նրա խոսքով՝ Բաքուն մոտ երկու ամիս միտումնավոր եւ անօրինական կերպով արգելում է մարդասիրական բեռներով բեռնատարների անցումը:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ՃՏՊ. 6 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ԿՐԹԱԹՈՇԱԿ ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԵՊՀ ուսանողական խորհուրդը մտահոգված է բակալավրի եւ մագիստրատուրայի՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորող առաջին կուրսի ուսանողներին պետական կրթաթոշակ չտրամադրելու ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2023 թվականի N 1430 -Ն որոշմամբ (այսուհետ նաեւ՝ Որոշում):

Մասնավորապես, տարիներ շարունակ բակալավրի եւ մագիստրատուրայի անվճար ուսուցման համակարգ ընդունված առաջին կուրսի ուսանողներին տրամադրվում էր պետական կրթաթոշակ՝ 5000-6000 դրամի սահմաններում, որը, սկսած այս ուսումնական տարվանից, չի տրամադրվելու:

«Այն, որ տրամադրվող կրթաթոշակի չափը ծայրաստիճան քիչ էր, մշտապես բարձրաձայնվել է մեր՝ուսանողներիս կողմից տարբեր հարթակներում, այդ թվում՝ ԵՊՀ կառավարման մարմիններում: Պարբերաբար առաջարկվել է եւ՛ Կառավարության անդամներին, եւ՛ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչներին վերանայել պետական կրթաթոշակի չափը՝ բարձրացնելով այն, ինչը, ցավոք սրտի, չի արվել:

Կառավարությունը, որպես Որոշման հիմնավորում, անդրադարձել է մինչ այս հատկացվող կրթաթոշակի չափին՝ նշելով, որ «4-5 հազար ՀՀ դրամի չափով կրթաթոշակը չի կարող էական ազդեցություն թողնել ո՛չ կրթության մատչելիության, ո՛չ էլ կյանքի որակի վրա»՝ փաստացի նույնպես ընդունելով, որ հատկացվող կրթաթոշակի չափը իրապես սակավ է, ինչին տրամաբանորեն պետք է հաջորդեր հատկացվող կրթաթոշակների չափը վերանայելու՝ այն բարձրացնելու գործընթացը:

Ի հեճուկս բարձրաձայնված խնդրի եւ դրա տրամաբանական լուծման՝ Որոշմամբ իրականացվում է պետական կրթաթոշակներին հատկացվող բյուջեի վերաբաշխում, որի արդյունքում բազմաթիվ ուսանողներ զրկվում են առանց այդ էլ սակավ քանակությամբ կրթաթոշակից, ինչը, գտնում ենք, որ արդարացված չէ, քանի որ, չնայած կրթաթոշակի սակավ լինելուն, բազմաթիվ ուսանողների հնարավորություն էր տալիս հոգալ իրենց կրթության, ճանապարհածախսի եւ այլ հիմնախնդիրների հետ կապված ծախսերը:

Փոխարենը Կառավարությունը որոշել է 70.000-77.000 ՀՀ դրամ կրթաթոշակ տրամադրել պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով (կրթական ծրագրերով) սովորող շուրջ 227 ուսանողների: Սա միանշանակ դրական փոփոխություն է, սակայն այն չպետք է լիներ տրամադրվող կրթաթոշակների վերացման փոխարեն, այլ պետք է լիներ լրացուցիչ խրախուսման մեխանիզմ՝ միաժամանակ բարձրացնելով մյուս մասնագիտություններով սովորող ուսանողներին տրվող կրթաթոշակի չափը:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը չի կիսում ՀՀ կառավարության եւ ԿԳՄՍ նախարարության այսօրինակ գործելաոճը եւ հետեւողական քայլեր է ձեռնարկելու խնդիրը բարձրաձայնելու եւ լուծելու համար:

Արդեն իսկ դիմել ենք ԵՊՀ գիտական խորհրդի սովորող անդամներին՝ նախաձեռնելու ԵՊՀ գիտական խորհրդի արտահերթ նիստ խնդիրը քննարկելու համար»:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԱՃՈՒՐԴ՝ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2023թ-ի հոկտեմբերի 02-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 76 լոտ՝ ոսկյա զարդեր 14.3 գր. ընդհանուր քաշով, որից 9,1գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8 գր.) ոսկյա զարդը 585 հարգի՝ 109,600 ՀՀ դրամ, 5.2գր. քաշով ոսկյա զարդը 958 հարգի՝ 116,800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 226.400 ՀՀ դրամ: Թիվ 77 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 78.4 գր. ընդհանուր քաշով, որից 21.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 17.6 գր.) ոսկյա զարդը 585 հարգի՝241,100 ՀՀ դրամ, 53,8գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 52.3 գր.) 585 հարգի՝ 716,500 ՀՀ դրամ, 2.7 գր. քաշով ոսկյա ջարդոնը 585 հարգի՝37.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 994.600 ՀՀ դրամ: Թիվ 78 լոտ՝ոսկյա զարդ 7.1 գր. քաշով 958 հարգի՝159.000 ՀՀ դրամ: Թիվ 79 լոտ՝ ոսկյա ջարդոն 4.3 գր. քաշով 500 հարգի՝ լոտի մեկնարկային գինը 50.300 ՀՀ դրամ: Թիվ 80 լոտ՝ ոսկյա զարդեր 28.5 գր. ընդհանուր քաշով, որից 2.8 գր. քաշով (զուտ քաշը 2 գր.) ոսկյա զարդը 500 հարգի՝23,100 ՀՀ դրամ, 24.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 24 գր.) ոսկյա զարդերը 585 հարգի՝ 328,800 ՀՀ դրամ, 1.3 գր. քաշով զարդը 750 հարգի՝ 22,800 ՀՀ դրամ՝ լոտի մեկնարկային գինը 374,700 ՀՀ դրամ: Թիվ 81 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 37.9 գր. ընդհանուր քաշով, որից 29.2 գր. քաշով (զուտ քաշը 27.7 գր.) ոսկյա զարդը 585 հարգի՝379,500 ՀՀ դրամ, 5.3 գր. քաշով ոսկյա ջարդոնը 900 հարգի՝111,800 ՀՀ դրամ, 3.4 գր. քաշով ոսկյա ջարդոնը 750 հարգի՝ 59,600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 550,900 ՀՀ դրամ: Թիվ 82 լոտ՝ ոսկյա զարդ 4,1 գր. քաշով 900 հարգի, լոտի մեկնարկային գինը 86,500 ՀՀ դրամ: Թիվ 83 լոտ՝ ոսկյա զարդեր 11,8 գր. ընդհանուր քաշով, որից 7,3 գր. քաշով ոսկյա զարդը 585 հարգի՝ 100,000 ՀՀ դրամ, 4.5 գր. քաշով ոսկյա զարդը 958 հարգի՝101,000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 201,000 ՀՀ դրամ: Թիվ 84 լոտ՝ ոսկյա զարդ 4.8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 65.000 ՀՀ դրամ: Թիվ 85 լոտ՝ ոսկյա զարդ 8,1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7,5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 102,000 ՀՀ դրամ: Թիվ 86 լոտ՝ ոսկյա զարդ 10.8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 148,000 ՀՀ դրամ: Թիվ 87 լոտ՝ ոսկյա զարդ 10.5 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 144.000 ՀՀ դրամ: Թիվ 88 լոտ՝ ոսկյա զարդ 8.1գր. քաշով 585 հարգի՝լոտի մեկնարկային գինը 110,000 ՀՀ դրամ: Թիվ 89 լոտ՝ ոսկյա զարդ 5,8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 79,000 ՀՀ դրամ: Թիվ 90 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 11,1գր. ընդհանուր քաշով, որից 10գր. քաշով ոսկյա զարդը 585 հարգի՝ 137,000 ՀՀ դրամ, 1,1 գր. քաշով ոսկյա ջարդոնը 585 հարգի՝ 15,000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 152,000 ՀՀ դրամ: Թիվ 91 լոտ՝ ոսկյա զարդ 6.6 գր. քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 148,000 ՀՀ դրամ: Թիվ 92 լոտ՝ ոսկյա զարդեր 30.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 29,4 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 402,000 ՀՀ դրամ: Թիվ 93 լոտ՝ ոսկյա ջարդոն 3,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 3,3 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 45,000 ՀՀ դրամ: Թիվ 94 լոտ՝ ոսկյա զարդեր 137,9 գր. ընդհանուր քաշով, որից 7,1գր. քաշով ոսկյա զարդը 958 հարգի՝159,500 ՀՀ դրամ, 13,7գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 13 գր.) 500 հարգի՝150,000 ՀՀ դրամ, 117,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 115 գր.) 585 հարգի՝ 1.575,500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1,885,000 ՀՀ դրամ: Թիվ 95 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 95,9 գր. ընդհանուր քաշով, որից 47գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 46,9 գր.) 900 հարգի՝ 989,600 ՀՀ դրամ, 48,9 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը եւ ջարդոնը (զուտ քաշը 48,7 գր.) 585 հարգի՝ 667,000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.656.600 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/. հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝դիմումի հիման վրա:

Հեռ. 043 00-42-27:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» Գ

ՀԱՆԳՍՏԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կոնվերս բանկ»-ը ներկայացնում է աշնանային ամենապահանջված ուղղություններն ու տեսարժան վայրերը, ուր այցելելով՝ կարող եք վայելել ոչ միայն անմոռանալի պահեր, այլեւ «Կոնվերս բանկ»-ի վճարային քարտերով վճարելու եւ անհոգում վճարումների համակարգերից օգտվելու ողջ հարմարավետությունը:

Եվ այսպես, Travel Off Path պարբերականն օրերս հրապարակել է տեղեկատվություն Եվրոպայում աշնանային ծովափնյա հանգստի սիրահարների համար՝ թոփ 3 ցանկում ընդգրկելով Տեներիֆեն, Կիպրոսն ու Մալթան:

Տեներիֆեն խոշորագույնն է Կանարյան կղզիներից: Այս միջարեւադարձային դրախտը գտնվում է Արմ. Աֆրիկայի հարեւանությամբ եւ հայտնի է որպես վայր, որտեղ հավերժ ամառ է: Աշնանը օդի ջերմաստիճանը հասնում է 22-25-ի, սակայն Ատլանտյան օվկիանոսի ջուրը փոքր-ինչ սառն է լինում:

Փոխարենը շատ հարմարավետ ջերմաստիճան է սպասվում Կիպրոսի ափամերձ ջրերում, որտեղ «իդեալական արեւային օրվա» հավանականությունը հոկտեմբերին 77% է, եւ Մալթայում, որտեղ եւս կանխատեսվում է արեւային տաք եղանակ:

Conde Nast Johansens անկախ տուրիստական ուղեցույցն իր հերթին ներկայացրել է հանգստի luxury եւ ամենաէժան տարբերակները:

Աշնանը բարձր դասի հանգստի ամենապահանջված ուղղություններն են Մեծ Բրիտանիան, Հունաստանը, Իտալիան, Իսպանիան, Պորտուգալիան, Ֆրանսիան, Իռլանդիան, Խորվաթիան, ԱՄՆ-ն եւ Կարիբյան ավազանի երկրները: Հետաքրքրական է, որ, նույն պարբերականի համաձայն, այդ երկրներից մի քանիսը՝ Պորտուգալիան, Հունաստանը եւ Խորվաթիան, ներառվել են նաեւ ամենաէժան տուրիստական ուղղությունների ցանկում:

Իսկ 2023-ին նոր, հետաքրքիր զգացողություններ որոնողների համար ցանկ է հրապարակել National Geographic-ը, որի ամենատեսարժան վայրերի ցանկում ներառված են Դոդեկանես կղզիները (Հունաստան), Միլոուկին (Վիսկոնսին, ԱՄՆ), Լաոսը, Ապիյան ճանապարհը (Իտալիա), Փուսանը (Հարավային Կորեա), Լունմէն քարանձավները (Չինաստան), Եգիպտոսը, Շոտլանդական սարահարթը, Սլովենիան, Ազորյան կղզիները, Ավստրիական Ալպերը, Մեքսիկայի Հայտնության ազգային պարկը, Չոկեկիրաուն (Պերու), Շվեյցարիան:

Մաղթում ենք Ձեզ հաճելի հանգիստ եւ հիշեցնում՝ հանգստի որ ուղղությունն էլ ընտրեք՝ լինի Ձեզ համար նոր երկիր, թե արդեն «հարազատ» դարձած Եգիպտոսն ու ԱՄԷ-ն, «Կոնվերս բանկ»-ն ունի վճարումների հարմարավետ, անվտանգ լուծում յուրաքանչյուրի համար՝

-անհպում վճարումների Apple Pay եւ G-Pay համակարգեր,

-Visa Virtual թվային քարտ՝ երեք արժույթով՝ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո,

-Visa, MasterCard միջազգային վճարային քարտեր:

Ընտրելով «Կոնվերս բանկ»-ը՝ դուք կստանաք աշխարհի ամենատարբեր անկյուններում ձեզ նախընտրելի տարբերակով անկանխիկ վճարումների եւ Converse Mobile հավելվածով ֆինանսները կառավարելու հնարավորություն՝ վայելելով հանգստի յուրաքանչյուր վայրկյանը:

Մանրամասները՝ conversebank.am, 010-511-211:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՓԱՌԱՏՈՆ

ԲԱՑՈՒՄ Է 98-ՐԴ ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան) բացում է իր 98-րդ համերգաշրջանը:

Մեկնարկում է Երեւանյան միջազգային երաժշտական 15-րդ փառատոնը՝ նվիրված մեծն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին:

Ողջ փառատոնի ընթացքում կհնչեն Արամ Խաչատրյանի հայտնի եւ սիրված ստեղծագործությունները: Բացման համերգին սեպտեմբերի 15-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում հանդես կգա անվանի դաշնակահար, Չայկովսկու անվան միջազգային մրցույթի առաջին մրցանակակիր (2015թ.) Դմիտրի Մասլեեւը՝ դիրիժոր Վալենտին Ուրյուպինի ղեկավարությամբ: Ծրագրում կհնչեն Խաչատրյանի թիվ 1 Սիմֆոնիան եւ Պրոկոֆեւի Դաշնամուրի եւ նվագախմբի համար գրված թիվ 3 կոնցերտը:

Նշենք, որ փառատոնի նշանավոր իրադարձություններից են անվանի հայ մենակատար Սերգեյ Խաչատրյանի եւ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգները Մեղրիում, Կապանում, Գորիսում եւ Գյումրիում: Շրջագայությունը կեզրափակվի երեւանյան համերգով սեպտեմբեր 28-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Համերգները կղեկավարի նշանավոր դիրիժոր Ստանիսլավ Կոչանովսկին, որը 2024/2025 համերգաշրջանում կստանձնի NDR Radio Philharmonic նվագախմբի գլխավոր դիրիժորի պաշտոնը:

15-րդ երեւանյան միջազգային երաժշտական փառատոնը այս տարի եւս աչքի է ընկնում աստղային մենակատարների կազմով. GRAMMY մրցանակակիր, ֆենոմենալ ջութակահար Ագուստին Հադելիխը հոկտեմբերի 2-ին կվերադառնա Հայաստան բացառիկ համերգով, որը կղեկավարի մաեստրո Էդուարդ Թոփչյանը, իսկ աշխարհահռչակ օպերային երգիչ, տենոր Ռամոն Վարգասը մենահամերգով հանդես կգա հոկտեմբերի 18-ին: Փառատոնի փակումը կնշանավորվի Ջուզեպպե Վերդիի «Պարահանդես-դիմակահանդես» օպերայի համերգային կատարմամբ:

Փառատոնի ընթացքում կկայանա նաեւ Ա. Խաչատրյանի վերջին հեղինակային ծրագրով համերգ, որտեղ կներկայացվեն կոմպոզիտորի հազվադեպ կատարվող կամերային ստեղծագործությունները:

Հավելենք, որ, ի մեծարումն Արամ Խաչատրյանի, կոմպոզիտորի 120-ամյակի շրջանակներում Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը հյուրախաղերով հանդես կգա Եվրոպայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Կանադայի այնպիսի հեղինակավոր համերգասրահներում, ինչպիսիք են Carnegie Hall, Le Maison Symphonique, Megaro Moussikis, Boston Symphony Hall, Roy Thomson Hall համերգասրահները: Համերգների ընթացքում Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ հանդես կգան հայ անվանի մենակատարներ դաշնակահար Սերգեյ Բաբայանը, ջութակահարներ Սերգեյ Խաչատրյանը եւ Անուշ Նիկողոսյանը՝ մաեստրո Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԼՈՆԴՈՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Theatre Royal Drury Lane-ում Լոնդոնի նորաձեւության շաբաթվան ընդառաջ կայացավ Vogue World. London միջոցառումը՝ նշանավորելով բրիտանացի խորհրդանշական ստեղծագործողներին՝ Շեֆտիրից մինչեւ Սթորմզի, եւ աղահովելով Մեծ Բրիտանիայի հարուստ մշակութային բեմի աղագան:

Ցուցադրությունը բացել է 49-ամյա Քեյթ Մոսը՝ Ջոն Գալիանոյի կողմից հատուկ իր համար ստեղծված զգեստով: Թեեւ շոուի բացման արարողությունը ձոն էր դասական գեղեցկությանն ու դրա վաղանցիկ բնույթին իր բոլոր ձեւերով, օձիքավոր զգեստը նաեւ սիրային նամակ էր հենց մոդելին: «Քեյթ, սիրելի Քեյթ»,- Vogue-ին ասել է Maison Margiela-ի կրեատիվ տնօրեն Գալիանոն՝ բացատրելով զգեստի մեկնարկային կետը: «Ես իսկապես ոգեշնչվել եմ Քեյթից, նրա անհավատալի փխրունությունից՝ գրեթե Մերլինի (Մոնրոյի) նման, եւ այդ շլացնող մագնիսականությունից, որը գրավում է»:

Նշենք, որ ցուցադրության ամենակարեւոր իրադարձությունը լեգենդար սուպերմոդելներ Քրիստի Թարլինգթոնի, Լինդա Էվանգելիստայի, Նաոմի Քեմփբելի եւ Սինդի Քրոուֆորդի հայտնվելն էր: Բրիտանական Vogue-ի խմբագիր Ջեք Բորկետը շողշողացող կերպարներ էր ընտրել AppleTV+ սերիալի «Սուպերմոդելների» ապագա աստղերի համար: «Այս զգեստները հիացնում են ոչ միայն իրականում, այլեւ վիրտուալ»:

Քրիստիի կերպարը Fendi-ի՝ 2023 թվականի աշնանային կուտյուրի առաջարկի արդյունքն էր՝ ոգեշնչված Դելֆին Դելտրեսի բարձր ոսկերչական դիզայնով: «Այն գրեթե օրգանական էր ստացվել՝ գույներով եւ ասեղնագործությամբ, որոնք հիմնված են բնական քարերի, սուտակի եւ շափյուղայի երանգների վրա»,- Vogue-ին պատմել է Քիմ Ջոնսը՝ խոսելով հավաքածուի մասին, որը միախառնում էր 90-ականների մինիմալիզմը դասական քանդակագործության օրինակների հետ:

Հավելենք, որ Լինդան ապշեցուցիչ կերպարով է հայտնվել Valentino-ի աշուն-ձմեռ 2023 շոուի ժամանակ, մինչդեռ Նաոմին ընտրել է բրիտանացի դիզայներ Ալեքսանդր Մաքքուինին՝ զմրուխտ կանաչ զգեստով:

Ինչ վերաբերում է Սինդիին, Դոնաթելլա Վերսաչեն մոդելի տեսքը ստեղծել է՝ իր՝ աշուն/ձմեռ 2023 հավաքածուի հիման վրա:

ՍՊՈՐՏ

ՈՍԿԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի հրաձգության հավաքականի անդամ Էլմիրա Կարապետյանը դարձել է աշխարհի գավաթի խաղարկության ոսկե մեդալակիր:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ բրազիլական Ռիո դե Ժանեյրո քաղաքում ընթացող աշխարհի գավաթի խաղարկության 10 մետր օդամղիչ ատրճանակ ձեւի կանանց պայքարում Էլմիրա Կարապետյանը, հավաքելով 236.6 միավոր, գրավեց առաջին հորիզոնականը: Երկրորդ եւ երրորդ տեղերում Չինաստանի ներկայացուցիչներն են:

Էլմիրա Կարապետյանը Հայաստանի դեռեւս միակ մասնակիցն է Փարիզի 2024 թվականի օլիմպիական խաղերում:

ՈՒԵՖԱ-Ն՝ ԸՆԴԴԵՄ ՀՖՖ-Ի

Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միությունը (ՈՒԵՖԱ) կարգապահական գործ է հարուցել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի դեմ՝ Երեւանում «ԵՎՐՈ-2024»-ի ընտրական փուլի շրջանակներում տեղի ունեցած Հայաստան-Խորվաթիա հանդիպման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի առնչությամբ:

Ինչպես փոխանցում է gazeta.ru-ն, ՀՖՖ-ին մեղադրանք է առաջադրվել մարզադաշտում հասարակական անցումները արգելափակելու, քաղաքական սադրիչ հաղորդագրությունների, պիրոտեխնիկայի եւ խաղը ուշ սկսելու համար:

Նշվում է, որ Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը կարող է պատասխանատվության ենթարկվել:

Անցյալ շաբաթ Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիան բողոք էր ուղարկել ՈՒԵՖԱ՝ ընդդեմ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի՝ Հայաստան-Խորվաթիա հանդիպման ժամանակ Երեւանի մարզադաշտի վրայով Լեռնային Ղարաբաղի դրոշով անօդաչու թռչող սարքի արձակման կապակցությամբ:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը հոկտեմբերի 17-ին ընկերական հանդիպում կանցկացնի Հյուսիսային Մակեդոնիայի ընտրանու հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հանդիպումը կկայանա Ստրումիցա քաղաքի «Մլադոստ» մարզադաշտում:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻՑ Է

Մադրիդի «Ռեալի» եւ Պորտուգալիայի հավաքականի նախկին խաղացող Լուիշ Ֆիգուն բարձր է գնահատել Արքայական ակումբի նորեկ, Անգլիայի հավաքականի 20-ամյա կիսապաշտպան Ջուդ Բելինգեմի որակները:

«Բելինգեմը շատ ուժեղ մեկնարկեց «Ռեալում» եւ շատ արագ հարմարվեց Արքայական թիմում:

Անկասկած, Բելինգեմն արդեն աշխարհի լավագույն ֆուտբոլիստներից մեկն է: Չնայած երիտասարդ տարիքին՝ նա նվիրված է գործին եւ մեծ տաղանդ ունի»,- Ֆիգուի խոսքը մեջբերում է իսպանական AS-ը:

Իսպանիայի առաջնության առաջին չորս տուրերում Բելինգեմը խփել է 5 գոլ, կատարել 1 գոլային փոխանցում:

● Սեպտեմբերի 17-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Անասնաֆերմա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ են անհրաժեշտ պատվաստումները:
Տիգրան Աբովյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատվաստումները լավագույն միջոցն են պաշտպանվելու այնպիսի վարակներից, ինչպիսիք են դիֆթերիան, փայտացումը, պոլիոմիելիտը, կապույտ հազը, կարմրուկը, կարմրախտը, խոզուկը, վիրուսային հեպատիտ Բ-ն, մենինգիտները եւ թոքաբորբերը՝ պայմանավորված պնեւմակոկային եւ հեմոֆիլուսային Բ տիպի վարակներով, ռոտավիրուսային վարակները: Պատվաստումներն անհրաժեշտ են, որպեսզի կանխարգելվի հիվանդացման դեպքը, կանխարգելվի մահը կամ հաշմանդամությունը, վարակներից պաշտպանվեն բնակչության ստվար զանգվածները:

Պատվաստանյութերը պատրաստված են հիվանդություն առաջացնող մանրէներից, որոնք փոփոխված են այնպես, որ մարդկանց չվնասելով՝ միաժամանակ ապահովեն վստահելի պաշտպանություն:

ՀՀ ԱՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պատվաստանյութն օրգանիզմում առաջացնում է համապատասխան հակամարմիններ, որոնք բնական վարակի հետ հանդիպելու դեպքում պաշտպանում են հիվանդանալուց: Իսկ եթե նույնիսկ պատվաստված երեխան հիվանդանում է, ապա հիվանդությունն ընթանում է անհամեմատ թեթեւ: Վարակիչ հիվանդությունները շատ արագ են տարածվում, սակայն այդ տարածումը կարելի է կանգնեցնել միայն այն պարագայում, երբ տվյալ բնակավայրում պատվաստված մարդկանց թիվը բավարար մակարդակի է (95%-ից ոչ պակաս): Համայնքում որքան շատ են պատվաստված երեխաները (նաեւ մեծահասակները), այնքան պաշտպանված է համայնքի յուրաքանչյուր անդամը:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

ՀԱՐՑ. Ի՞նչ է մանկավարժական մասնակի կենսաթոշակը եւ ու՞մ է այն տրվում:
Ջինաիդա Սայադյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ մասնակի կենսաթոշակ նշանակվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է: Մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով եւ պաշտոններում մինչեւ 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները: Մասնակի կենսաթոշակը հաշվարկվում է մասնագիտական աշխատանքային ստաժին համամասնորեն:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում: Մասնակի կենսաթոշակը նշանակվում է մինչեւ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վրաստանի Քութաիսի քաղաքում սեպտեմբերի 8-14-ը տեղի է ունեցել Ինֆորմատիկայի Եվրոպայի պատանեկան միջազգային 7-րդ օլիմպիադան:

Հայաստանը ներկայացնող դպրոցականներն արժանացել են 3 մեդալի. Ալեքս Գրիգորյանը նվաճել է ոսկե, Ալեքսանդր Ղազարյանը՝ արծաթե, Վահան Աբրահամյանը՝ բրոնզե մեդալ: Մեր մասնակիցներից Մակար Դիլանյանը ստացել է գովասանագիր: Թիմը ղեկավարում էին Արմեն Անդրեասյանը եւ Սամվել Անդրեասյանը (ԵՊՀ):

Նշենք, որ օլիմպիադային մասնակցել են 24 երկրների 96 ներկայացուցիչներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________________
Ազգանուն՝ ____________________
Առաքման հասցե՝ ____________________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+4 +9	+19 +21
Կոտայքի լեռներ	+4 +8	+17 +20
Կոտայքի նախալեռներ	+11 +14	+19 +24
Գեղարքունիք	+4 +8	+16 +20
Լոռի	+5 +9	+19 +22
Տավուշ	+7 +12	+22 +25
Արագածոտնի լեռներ	+4 +8	+16 +20
Արագածոտնի նախալեռներ	+11 +14	+21 +25
Արարատ	+13 +16	+25 +27
Արմավիր	+12 +15	+24 +27
Վայոց ձորի լեռներ	+4 +7	+17 +21
Վայոց ձորի նախալեռներ	+12 +15	+23 +26
Սյունիքի հովիտներ	+14 +17	+18 +21
Սյունիքի նախալեռներ	+8 +12	+14 +18
ԼՂՀ	+14 +17	+18 +21
Երեւան	+10 +12	+23 +25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*